ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2026 թվականի N 2177-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ 06-058-0013-0023 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 27.4 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերով, 61-րդ հոդվածի առաջին կետով, 67-70-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 463-465-րդ հոդվածներով, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետով, 80-րդ հոդվածով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4.1 գլխի հոդվածներով, ՀՀ կառավարության 28.09.2023թ. N 1667-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 13.11.2026թ. N 221-Ա, N 222-Ա որոշումների՝ որոշում եմ.

1. Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող մեկ միավոր հողամասը և մեկ միավոր տարածքն օտարելու նպատակով անցկացնել էլեկտրոնային աճուրդ 2027 թվականի հունվարի 22-ին, ժամը 11:00-ին հետևյալ լոտերով.

Լոտ 1: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքիգյուղ Հագվի, 1-ին փողոց, 3-րդ նրբանցք, 3 հասցեում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-058-0013-0023 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.03443 հեկտար մակերեսով հողամասը 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով:

Հողամասի նախավճարը սահմանված է 240 000 (երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, նվազագույն հավելման չափը՝ 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ:

Լոտ 2: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի քաղաք Ալավերդի Ֆ. Էնգելսի թաղամաս 8 շենք, 30 հասցեում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0048-0022-001-030 ծածկագրով, հասարակական նշանակության 27,4 քմ մակերեսով տարածքը 1 654 000 (մեկ միլիոն վեց հարյուր հիսունչորս հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ հասարակական գործունեություն իրականացնելու նպատակով:

Հողամասի նախավճարը սահմանված է 496 200 (չորս հարյուր իննսունվեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, նվազագույն հավելման չափը՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

2. Աճուրդի մասնակցության վճարը սահմանված է 15000 (տասնհինգ հազար) դրամ որպես տեղական վճար:

3.Յուրաքանչյուր լոտի էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի աճուրդի նվազագույն սկսման պահին հաջորդող երրորդ աշխատանքային օրվա համապատասխան ժամը:

4.Էլեկտրոնային աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը: Հաղթողը որոշվում է համակարգի միջոցով: Կազմակերպիչն էլեկտրոնային աճուրդի կայացման օրը հաղթող մասնակցի վերաբերյալ կազմում է սահմանված ձևին համապատասխան արձանագրություն և առցանց եղանակով ուղարկում է հաղթող մասնակցին այն ստորագրելու և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու համար:

5. Էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցը պարտավոր է արձանագրությունն ստորագրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել լոտի գինն ամբողջությամբ՝ հաշվանցելով նախավճարը:

6. Էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցը պարտավոր է արձանագրությունն ստորագրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել Գույքի արժեքի որոշման համար նախատեսված գումարը փոխանցել 900265003799 հաշվեհամարին՝ պարտադիր նշելով օտարվող գույքի հասցեի (նշելով գույքի հասցեն) որոշման արժեքի ծառայության համար:

7. Վճարումները կատարելուց հետո հաղթող մասնակցի հետ կնքվում է առուվաճառքի պայմանագիր, և իրականացվում են գույքի հանձնման-ընդունման աշխատանքներ:

1) Կնքվող պայմանագրերի էական պայմանները պետք է համապատասխանեն սակարկությունների մասին հրապարակային ծանուցմամբ սահմանված պայմաններին:

2) Գումարն ամբողջությամբ վճարելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, աճուրդում հաղթող անձի հետ կնքվում է օտարման պայմանագիր, որը վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման:

3) Օտարման պայմանագրում պետք է ամրագրվեն համայնքի հողի առաջնային հետգնման իրավունքը և տնտեսավարող սուբյեկտի կողմից իրականացվող ծրագրի ժամկետները: Պայմանագրի խախտման դեպքում դա կարող է լուծվել դատական կարգով:

4) Սակարկությունների ընթացքում վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության դրամով առցանց բանկային հաշվեհամարով կամ փոխանցում կատարելով:

8. Էլեկտրոնային աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած մասնակցի նախավճարը երեք աշխատանքային օրվա ընթացքում ապասառեցվում է:

9.Աճուրդում հաղթած մասնակցի կողմից արձանագրությունը չստորագրելու կամ հետագա վճարումներից հրաժարվելու դեպքում, վերջինիս կողմից մուծված նախավճարը չի վերադարձվում, աճուրդը համարվում է չկայացած և լոտ (եր)-ը վաճառելու նպատակով կազմակերպվում է նոր աճուրդ՝ նույն պայմաններով:

10. Աշխատակազմին՝ Էլեկտրոնային աճուրդի կազմակերպման մասին հրապարակային ծանուցումները հրապարակել Ալավերդու համայնքապետարանի www.alaverdi.am և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքերում, զանգվածային լրատվությամբ, ինչպես նաև զետեղել էլեկտրոնային համակարգում:

11.Անշարժ գույքերը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

12. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2026թ. նոյեմբերի 24
ք. Ալավերդի